Ինչու՞ ընտրել մեզ՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է ավելի քան 24 տարի և ապահովագրական շուկայում ունի իր կայուն դիրքը: Ընկերության հաջողության գրավականը մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանցից կազմված թիմն է և թիմի ներսում տիրող դրական մթնոլորտը: Ընդառաջ գնալով ժամանակի մարտահրավերներին՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ–ն իր թիմակիցների համար մշտապես ստեղծում է աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ ժամանակ առ ժամանակ տարբեր բնույթի բենեֆիթներ տրամադրելով:

Պաշտոնը՝ Զանգերի կենտրոնի մասնագետ – Ընկերությունը փնտրում է հավասարակշռված և նպատակասլաց թեկնածու Զանգերի կենտրոնի մասնագետի թափուր հաստիքը համալրելու նպատակով: Աշխատանքը գիշերային և ցերեկային հերթափոխերի համատեղությամբ է:

Տարածաշրջան՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 39

Պահանջներ՝

- Բարձրագույն կրթություն, ցանկալի է տնտեսագիտական,
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացություն,
- MS office իմացություն,
- Թիմում աշխատելու ունակություն,
- Բարդ իրավիճակներում արագ և ինքնուրույն կողմնորոշվելու ունակություն,
- Սթրեսակայունություն,
- Մտքերը գրագետ, հստակ արտահայտելու կարողություն,
- Պատասխանատվության զգացում,
- Հաճախորդների հետ շփման ունակություն,
- Աշխատանքային փորձի առկայությունը կդիտվի որպես առավելություն:

Աշխատավարձ՝ պայմանագրային

Աշխատանքային գրաֆիկ՝ Հերթափոխային

Պարտականություններ՝

- Հաճախորդների զանգերի սպասարկում, հայցերի ընդունում և գրանցում,
- Անհրաժեշտության դեպքում հետադարձ զանգերի իրականացում,
- Հայցերի փոխանցում համապատասխան ստորաբաժանման աշխատակիցներին:

Ընտրելով մեզ ի՞նչ արտոնություններ և հնարավորություններ կստանաք Դուք.

- Առողջության ապահովագրության փաթեթ,
- Ընտանիքի անդամներին ապահովագրելու հնարավորություն,
- Սպորտային ակումբի ամբողջական ծառայությունների փաթեթ,
- Տարեկան տրամադրվող վարձատրվող Day off–երի և Time off-երի հնարավորություն,
- Ընկերության կողմից սպասարկվող Visa Classic քարտ,
- Ծննդյան և նախատոնական օրերին աշխատանքը շուտ ավարտելու հնարավորություն,
- Ընկերության ներսում դասընթացների կազմակերպում, մասնագիտական փորձի փոխանակման մշակույթի առկայություն,
- Պարբերաբար թիմի որակավորման բարձրացմանն ուղղված սեմինարների կազմակերպում,
- Սոցիալ–մշակութային բնույթի միջոցառումների, թիմային հավաքույթների, կորպորատիվների կազմակերպում:

Անհրաժեշտ փաստաթղթեր և դիմելու կարգը՝

Եթե համապատասխանում եք մեր պահանջներին և ցանկանում եք համագործակցել մեզ հետ, կարող եք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել **hr@silinsurance.net** էլեկտրոնային հասցեին (թեմա դաշտում պարտադիր նշել պաշտոնի անվանումը):

Վերջնաժամկետ՝ 10.11.2024թ.: